



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 11 ՆՈՅԵՄԲԵՐ, 2013

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՐՄՈՍ 111

ՕՐՀՆԵՐԳՈՒԹԻԻՆ ՏԻՐՈՋ

**Օրհնութիւն երգեցէ՛ք Տիրոջ:**  
Ամբողջ արտովս կ'ուզեմ՝ քեզի գոհութիւն յայտնել, **Տէր**,  
ուղիղ վարքով ապրող մարդոց հետ, ժողովուրդիդ հետ համախումբ:  
Մեծ են **Տիրոջ** գործերը. զանոնք սիրողները կը սերտեն զանոնք:  
**Տիրոջ** գործերը փառաւոր են եւ հիանալի,  
եւ իր արդարութիւնը՝ յաւիտենական:  
**Տէրը** կ'ուզէ որ յիշատակուին սփանչելի գործերը իր,  
թէ՛ **Տէրը** ինք բարեգութ է եւ ողորմած:  
Իրմէ ակնածողներուն ուտելիք կու տայ, եւ իր ուխտը չի մոռնար քնաւ:  
Իր գործերուն զօրութիւնը ցոյց տուաւ իր ժողովուրդին,  
անոնց տալով հեթանոս ազգերու երկիրը:  
Անոր գործերը արդար են եւ իրաւացի.  
անոր բոլոր հրահանգները վստահելի են,  
սահմանուած՝ մնալու յաւիտեանէ յաւիտեան,  
որպէսզի գործադրուին հաւատարմութեամբ եւ ուղիղ կերպով:  
**Տէրը** փրկութիւն դրկեց իր ժողովուրդին,  
եւ հրամայեց իր ուխտը պահել յաւիտեան. սուրբ է ան, եւ ահաւոր:  
Իմաստութեան սկզբնաբայլը **Տիրոջ** երկիւղն է.  
Խելացի է ան՝ որ **Տիրոջ** պատուէրները կը գործադրէ:  
Յաւիտենապէս անոր օրհներգութիւն պիտի մատուցուի:

### ՇԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:*  
*Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:*  
*Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:*  
*Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղեցոց:*  
*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,*  
*Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

**Պ**ահապան ամենայնի Քրիստոս,  
աջ թո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ թո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

**ԱՐԱՎՈՐՈՒՄԻ ՄԻՒՍ ՍԵՐՈՒՆԴԸ (25:1-6)**

Այս հապրուածը մեզի կը ներկայացնէ Աբրահամի վերջին փորձերը, որ այս անգամ Սառայի մահէն ետք նոր կին կ'առնէ: Աբրահամի այս ընթացքը, ոչ թէ մարդկային կիրքի կամ ցանկութեան իր-րեւ արտայայտութիւն, այլ՝ անով որպէսզի ճշմարիտ աստուածաշարժութիւնը փարածուի:

Հետաքրքրականօրէն, Աբրահամ իր բոլոր ունեցածը Իսահակին փոխաւ, իսկ իր հարճերուն որ-դիներուն պարգեւներ:

**ԱՐԱՎՈՐՈՒՄԻ ՄԱՂՆ ՈՒ ԹԱՂՈՒՄԸ (25:7-11)**

Այս հապրուածը մեզի կը ներկայացնէ Աբրահամի մահն ու թաղումը, որ այս պարագային ցոյց կու տայ թէ ինչպէս արդար մարդը, որուն մարմինը եղաւ ընտրուած անօթ հոգիին, որուն համար ալ թաղման կարգը այնպիսի երկիւղածութեամբ փնտրուի կ'ունենայ, որ ժամանակներու լրումին յարութիւն պիտի առնէ այդ մարմինը, որովհետեւ Աստուած Աբրահամի Աստուածն է: Որ կը նշանակէ Աբրահամ ֆիզիքապէս, ժամանակուան մը համար ննջեց, որպէսզի ժամանակներու լրումին յարութիւն առնէ:

**ԻՍՄԱՅԷԼԻ ՍԵՐՈՒՆԴԸ (25:12-18)**

Աստուածաշունչ Մաբեանը մեզի կը ներկայացնէ երկու խումբի մարդիկ: Ճշմարիտ աստուած-պաշտութեան գիծը պահող, եւ անոնք որոնք չպահեցին: Չպահողներու պարագային շարք արագ կ'անդրադառնայ, պարզապէս անոնց անունները յիշարակելով, իսկ շարք աւելի քան կու տայ անոնց, որոնք կը պահեն այդ գիծը: Ինչպէս օրինակ Կայէն եւ Աբել:

**ԵՍԱՒԻՆ ՈՒ ՅԱԿՈԲԻՆ ԾՆՈՒՆԴԸ (25:19-28)**

Շարք կարեւոր հապրուած մըն է որ մեզի կը ներկայացնէ, Եսաւն ու Յակոբին ծնունդը: Իսահակ աղաչեց Տիրոջ իր կնոջը համար, որովհետեւ ամուլ էր: Հետաքրքրականօրէն, Աստուած-աշունչը մեզի կը ներկայացնէ մարդիկ, որոնք ամուլ են, թէւ ընկերութեան աչքին անկութիւնը կարծէք պարփոյ մէկ փարբերակ էր, սակայն Աստուածաշունչին մէջ ո՛չ, որովհետեւ ամուլութեան պիտի յաջորդէ բացառիկ ծնունդ մը, ինչպէս օրինակ՝ Սառան, Ռեբեկան, Ռաքելը, Անան, Եղիսաբէթը, եւ այս բոլորը պարբերաբար ծնունդ են գալիք մէկ այլ բացառիկ ծնունդին, որ Քրիստոսի ծնունդն է կոչուեն ծնած: Միւս կողմէ, եթէ երբեք Իսահակ կը պարկերացնէ Քրիստոսը, իսկ Ռեբեկան՝ Եկեղեցին, ուրեմն Քրիստոսի աղօթքովն է, որ Եկեղեցին պիտի սկսի ծննդաբերել, հոգեւոր ծնունդներով:

Բայց յանկարծ Ռեբեկայի արգանդին մէջ երկուորեակներ կան, որոնք կը կռուին: Այս բանին համար Ռեբեկան գնաց, որպէսզի Տիրոջ հարցնէ: Աստուածային խորհուրդները հասկնալու համար, պէք է «երթալ», բայց ո՛ր: Ոչ անպայման քեզ մը, այլ վիճակէ մը ուրիշ վիճակի: Ինչպէս որ էր պարագան Մովսէսին (Ելից 3.3): Իսկ երկուքի ներկայութիւնը նաեւ ցոյց կու տայ հետեւեալ ճշմարտութիւնը.

1. Մեր մէջ երկու երեւոյթներու ներկայութիւնը, բարիի ու չարի: Երկու նկարագիրները: Առաքինու-թիւններն ու մոլորութիւնները: Մարդկային պարտքներն ու Ս. Հոգիի պարտքները:
2. Նախ մարմնաւորին ծնունդը, յետոյ հոգեւոր ծնունդը: Նախ Եսաւը ծնաւ յետոյ Յակոբը: Մեծը պիտի ծառայէ կրթութիւն: Նոյնպէս ալ երբ հոգեւոր ծնունդը կ'ունենանք այս անգամ մեր մարմին-ները պէք է ծառայեն մեր հոգիին: Այլապէս՝ Պօղոս Առաքեալը կ'ըսէ մնայուն պայքար կայ մէջ:
3. Տակաւին, Եկեղեցւոյ կեանքին մէջ եւս, ուր որպէս Եկեղեցին արգանդը, որուն մէջ կան երկու փարբերակները: Ինչպէս Քրիստոս պիտի նշէ որոմին առակով:

**ԵՍԱՒ ԿԸ ԾԱՆԷ ԱՆԴՐԱՆԿՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ (25:29-34)**

Այս հապրուածը մեզի կը ներկայացնէ, թէ որքանով հետաքրքրուած էր Եսաւ իր անդրանկու-թեամբ: Անդրանկութիւնը շնորհք մըն է, որուն համար ալ հապրուածի աւարտին կ'ըսէ. «Եսաւ իր անդ-րանկութիւնը անարգեց»: Ըստ նկարագրի Եսաւ շարք աւելի անհոգ էր: Շարք աւելին, Եբրայեցւոց նա-մակին 12.15-17 համարները կու գան աւելցնելու. «Չըլլայ մէկը Աստուծոյ անհաւարարիմ կամ անոր պարգեւները արհամարհող ըլլայ Եսաւին պէս, որ կերակուրի մը համար իր անդրանկութիւնը ծախսեց»: Հարցը կերակուրը չէ, այլ որքան աւելի իրեն փրուած շնորհքին նկատմամբ իր ունեցած վերաբերմուն-քը: Եսաւին համար շարք աւելի կարեւոր էր ժամանակաւորը, քան մնայուն, իսկ Յակոբի համար՝ ընդհակառակը: